Խոտ

Բնակչություն՝ 890

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 83 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 12 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1350 մ,
Բնակավայրի կարգավիճակը՝ սահմանամերձ,
Խոտը Սյունիքի մարզի հնագույն բնակավայրերից է, գտնվում է Որոտանի ձախ կողմում՝ բարձրադիր սարավանդի վրա: Հին Խոտ գյուղը գտնվում էր Որոտանի ձախ ափի խիստ զառիթափ լեռնալանջին՝ շրջապատված այգիներով և անմատչելի ժայռերով: 1205 թվականին Խազբակի որդի Դլեն իշխանը Խոտ գյուղը և Խոտագետի մեծ այգին նվիրում է Տաթևի վանքին, որից հետագայում խլում են, իսկ 1274թ. կրկին վերադարձվում է վանքին:
Հին գյուղում է գտնվում Մրգաձորի խաչ կոչվող, իսկ քիչ հեռու՝ Խոտի վանք (5-6 դար) կոչվող եկեղեցիները:
Գյուղի շրջակայքում կան մ.թ.ա. 2-1 հզմ թվագրվող դամբարանադաշտեր, հին գերեզմանոցներ, որից մեկում պահպանված են Կարմիր եկեղեցու (12-րդ դար) ավերակները: Ըստ ավանդության այդ եկեղեցու զանգերը հայտնի են եղել իրենց զորավոր հնչեղությամբ և սրա հետ էլ կապում են Զանգեզուր անունը: Ըստ մեկ այլ ավանդության՝ եկեղեցիներից մեկն էլ, հավանաբար Մրգաձորի խաչ կոչվածը, կառուցել է Շահ-Աբասի հարեմից փախած մի կին:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 209 գյուղացիական տնտեսություն:
Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1795 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1592 հա, որից՝
- վարելահող՝ 529 հա, բազմամյա տնկարկ՝ 50 հա, խոտհարք՝ 31 հա, արոտ՝ 76 հա, այլ հողատեսք՝ 906 հա
- բնակավայրերի հողեր՝ 98 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 13 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 28 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 25 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 31 հա,
- ջրային հողեր՝ 8 հա